

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Բաժանուած խումբը և բազուցիների յամառութիւնը, Թիֆլիսի խումբը
և նրա թերութիւնը, ճադուի խումբը և նրա զինաւոր ողբերի տկարու-
թիւնը, Քարդանական և ինքնուրուն պիեսներ:

Հայոց բեմական ոյժերից հազիւ հազ կարելի է մի օրինաւոր խումբ կազմել, իսկ այս տարի նոտ բաժա-
նուած է երկու մասերի: Մի մասը սեպտեմբերի 15-ից
արդէն սկսել է խաղալ Թիֆլիզում, Արտիստիքական
ընկերութեան գեղեցիկ թատրոնում և պիտի խաղալ մին-
չև գեղաբեմբերի վերջը: Իսկ այնուհետեւ ինչ պիտի ա-
նիշեռ յայտնի չէ: Միւս մասը հոկտեմբերի մէկից պի-
տի խաղալ Բագւում «Թաղիեւի թատրոն» կոչուած շտե-
մարանում մինչև սեզօնի վերջը:

Դերասանական թերուժ խմբի ալսպիսի պառակտ-
ման պատճառն այս անգամ իրանք գերասանները չեն,
այլ այն անձինք, որոնք յանձնն են առել Հայոց թատ-
րոնի գործը վարել: Մեզ հասած տեղեկութիւններից
երևում է, որ մեղաւոր են այս անգամ մի քանի բա-
գուցիներ, որոնք հասարակական փողերը իրանց իրա-
ւունքի տակ պահելով, յաւակութիւն ունին Հայոց
թատրոնի ճակատագրի վերաբերմամբ դեր խաղալու:

Անցեալ անգամ մենք ակնարկեցինք, որ այդ մար-
դիկ, չունենալով առնչութիւն թատրոնի հետ և առ-
հասարակ որ և է գտղափար գեղարուեստի մասին, վեր-
ջին 4—5 տարուայ ընթացքում խեղճ Հայոց թատրոնի
առանց այն ևս վատ վիճակը վատթարացըին: Ծախսե-
լով աւելի քան 60 հազար ռուբլի մի հասարակական

գումար, Բագուշի ինքնակոչները չը կարողացան ոչ մի բեմական նոր ոլժ տապարէզ հանել, ոչ մի ինքնուրոյն պիես տալ հաստրակութեանը և ոչ էլ գոնէ քիչ թէ շատ ապահովել բեմի նիւթական ապագան։ Կարծում ենք ինքնըստինքեան հասկանալի է, որ այդ մարդիկ պիտի զգալին իրանց անձեռնհասութիւնը և գործը փշացնելուց յետով, հանգիստ թողնէին բազմաչարչար հայկական բեմը։ Ոակայն ալդպէս չարին։ Այս տարի, ընդհակառակը, նրանք չարիքը աւելի խոշորացրին։ Փոխանակ նպաստելու Թիֆլիսի նորակազմ դրամատիքական ընկերութեանը նիւթապէս, նրանք վնասեցին գործին, վճռելով պահել առանձին խումբ։ Եթէ բագուցիները հասկանալին թատրոնի իսկական նշանակութիւնը, գլուխները թեքած պիտի իրանց ժողոված փողերը բերէին և խոնարհաբար յանձնէին Թիֆլիսի ընկերութեանը։ Այն ժամանակ ընկերութիւնը միջոց կունենար պահել մի մեծ և ամբողջ խումբ։ որ երեք տմիս կը խաղար Թիֆլիսում և երեք ամիս Բագուում, Խոկ այժմ գրութիւնն ալսպէս է — Թիֆլիզումն էլ կայ խումբ, Բագուումն էլ, բայց իսկապէս ոչ ալստեղ կայ անսամբլ ոչ ալնտեղ։ Հետեաբար թէ ալստեղ և թէ մանաւանդ Բագուում գործը կաղալու է և կաղալու է շատ վատ։ Ասում ենք մանաւանդ Բագուում, որովհետև մեր բեմական գրեթէ բոլոր տչքի ընկնող ուժերը Թիֆլիզումն են խաղում։ Խոկ Բագուի խումբը գլխաւորապէս բաղկացած է բոլորովին անփորձ և տակաւին անծանօթ ոյժերից,.. Հետեաբար չի հարկաւոր մարգարէ լինել ասելու համար, որ այս ձմեռ Բագուի հայ հասարակութիւնը չի այցելելու հայոց ներկալացումները, բեմը սնանկանալու է, և նորա ինքնակոչ զեկավարները նորից ըսկըսելու են դռնէ դուռն մուրացկանութիւն անել «յօգուտ թատրոնի»։

Թիֆլիզի խմբի գլխաւոր ղեկավարութիւնը ընկերութեան կողմից յանձնուած է մի հմուտ, ձեռնհաս և վստահութիւն վայելող անձի։ Մենք գոնէ լիովին վստահ ենք, որ պ. Ե. Փիթոյեանն եթէ կամենալ սիրով վերաբերուել դէպի Հայոց բեմը, կարող է նրան վերադարձ-

Նել այն ցանկալի դրութիւնը, որ մի ժամանակ ունեցել է երբ թատրոնական գործի գլուխ էին կանգնած հմուտ մարդիկ: Վստահ ենք նաև, որ պ. Աբէլեանը, որ հրաւիրուած է բացի գլխաւոր դերեր կատարելուց նաև ռէժիսորի պաշտօնով, կը կարողանալ ներկալացումները կանոնաւորել: Դոնէ առաջին երեք չորս ներկալացումները, որ տեսանք մենք այս տարի, խրախուս են մեր վստահութեան: Ալժմ դերակատարները աւելի բարեխղճաբար են վերաբերում իրանց դերերին քանանցեալ տարի, աչքի ընկնող սխալներ չեն անում, ներկալացումները սկսում են որոշեալ ժամանակին, խաղամիջոցները դնում են կարճ, բեմի ետևից հասարակութիւնը անկարգութեան ազմուկ չի լսում, լուշարարը չի բղաւում, ինչպէս այդ առհաստրակ լինում է հալոց ներկայացումներին:

Այս բոլոր առաւելութիւնները սակայն չեն կարող գնել այն խոշոր թերութիւնը, որ նկատելի է խմբի մէջ: Դա կանանց ոլժերի սակաւութիւնն է: Լուրջ դրամաների համար խումբը, բացի տիկ. Մալտուրեանից, չունի ոչ մի քիչ շատ աչքի ընկնող ոլժ դրամատիկ պատասխանատու դերերի համար: Ուստի զարմանալի է, որ ընկերութիւնը չի հրաւիրել օր. Խիթթարեանին կամ գոնէ Վարդ. Ֆելեկեանին: Տիկ. Սիրանոյշի բացակալութիւնը շատ էլ զգալի չէ, որովհետեւ ռեպերտուարը այնպէս է կազմուած, որ տիկինը նրանց մէջ չի կարող դեր ունենալ: Դոհութիւն Աստծու, այս անգամ մենք ազատուած ենք անմիտ և անհամ մելօդրամներից, որոնց այնպիսի եռանդով պահում էր խեղճ բեմի վրա ուկ: Սիրանոյշի լամտութիւնը, նոր կազմուած ռեպերտուարի մէջ պատկառելի դերասանուհին կարող էր տեղ ունենալ եթէ կամենար հաշտուել ժամանակի անողոք ոլժի հետ և թողնելով ջահել կանանց դերերը, անցնէր մալրերի դերերին,.. նաև եթէ կամենար ըմբռնել հասարակութեան գեղարուեստագէտ մասի արդարացի կարծիքը, թէ Համլետի կազուի մէջ մտնելու նորն իսկ իրանից շատ ու շատ բարձ դերասանուհիների կողմից ծաղը և անարգանք է դեղարուեստի դէմ...

Դաշլով արանց ոլժերին այստեղ ևս նկատուամ է թեւկում:

ըութիւն։ Խումբը չունի սիրահարի դերերի համար դերասան, ուստի շատ պիեսներ նա կամայ ակամայ աղաւաղելու է։ Սակայն այդ թերութեան հետ ճարահատեալ պիտի հաշտուել, քանի որ Թիֆլիզի խմբից դուրս էլ չենք կարող մատնացոյց անել այդ դերերի համար պատրաստուած փոքր ի շատէ օրինաւոր որժ։

Անհամեմատ աւելի պակասաւոր է Բագուի խումբը։ Եթէ Թիֆլիսի խումբը կարող է պարծենալ հայ բեմի ալիմեան առաջին ոյժերով տիկ։ Մայսուրեանով, պլ. Աբելեանով և Պետրոսեանով, Բագուի խումբը պարծենալու ոչ մի ոյժ չունի առ ալժմ։ Պ. Արմենեանը, որ հրաւիրուած է իրեւ խմբի ռեժիսոր, պիտի կատարի գլխաւոր դերեր։ Կանանց գլխաւոր դերերի համար հրաւիրուած են օր. օր. Աղամենան և Վարդիթեր։ Այս դերասանուհիները կարող են վինել շատ լաւ լրացուցիչ ոյժեր, բայց առաջնակարգ դերերի համար տակաւին անպատրաստ են։ Նոյնը, աւելի խորը համոզուած, կարելի է ասել և պլ. Արմենեանի մասին։ Այդ դերասանը որ այն քան էլ նոր չէ և թարմ, որքան կարծւում է, սրանից 12 տարի առաջ հրաւիրուած էր Կ. Պոլսից իրեւ անփորձ պատանի, որ տոգորուած էր անկեղծ սիրով դէպի բեմը։ Մի սեզօն իւր պատանեկան ոյժերը փորձելուց յետու, նա հեռացաւ Թիֆլիզից և ահա ալժմ վերադարձել է նորից իրեւ դերասան։ Ասում են, թէ պլ. Արմենեանը մի քանի տարի Պարիզում ուսումնասիրել է բեմական արուեստը, եղել է մինչև անգամ սցենարիստ-սի օգնական ինչ որ թատրոնում։ Այդ, ի հարկէ, գովելի աշխատասիրութիւն է նրա կողմից։ Բայց աշխատասիրութիւնը տաղանդի զօրեղ նեղուկն է միայն։ ոչ աւելի...

Մենք դէպք ունեցանք պլ. Արմենեանին երկու անգամ տեսնել այս տարի բեմի վրայ։ Անկեղծութիւնը պահանջում է խոստովանել, որ ոչ մի անգամ նրա խաղը մեզ վրայ տպաւորութիւն չը գործեց։ Ճշմարիտ է, պլ. Արմենեանը ունի մի քանի իւրացրած ձևեր, շարժումներ, գիտէ հագնուել ճաշակով, բայց միայն այսքանը։ Նրա արմատական պակասութիւնը անկեղծ զէացման

և ստեղծագործական ձերքի բացակալութիւնն է։ Պ. Արմենեանը բաւական կոկուած դերակատար է, բայց տաղանդ չէ։ Նա կարող է նմանեցնել իւր խաղը այս կամ այն ֆրանսիական արտիստի խաղին, որով լափշտակուել է, բայց ինքնուրույնութիւնն է միայն դերակատարին արտիստ դարձնողը։ Գալով նրա իւրացըած խաղի բնաւորութեանը, պէտք է ասել, որ նրա շկօլան հնացած է և ոչ ախորժելի մեզ համար։ Նա չի խօսում, այլ երգում է և երգում է տկար ձայնով։ Նա չի խոզում, այլ վազվզում է բեմի վրայ չարաճճի մանկան պէս։ Ալսպիսի մի տկար ոյժ չի կարող Բագուի խմբի համար հրապարակչի գիւտ համարուել։ Բայց և այնպէս նա կարեսը դերակատար է և աւելի լու կը լինէր եթէ նու հրաւիրուած լինէր Թիֆլիսի խումբը... Գուցէ իբրև և ոեժիսօր նա Բագում աւելի օդտակար լինի — ըստիսնք։ Կը սպասենք...

Դալով ռեպերտուարին, պէտք է ասել, որ Թիֆլիսում գոնէ նա կազմուած է բաւական հարուստ։ Մենք հաճոյք կունենանք տեսնելու մի շարք նորագոյն ուղղութեամբ գրուած լայտնի եւրոպական և ռուսական պիեսներ, որոնք բեմակոն արժանաւորութեան հետ նուև գրականական նշանակութիւն ունին։ Հառապտման, Զուգերմանց, Մետերնիկ. ահա մի քանի նշանաւոր անուններ, որոնց երկերը պիտի ներկայացուեն այս տարի։ Մի բան միայն ցանկալի է՝ թարգմանութեանց լեզուի մաքրութիւնը։ Մեպերտուարական մասնաժողովը պիտի ուշ դարձնի թարգմանիչների լեզուի վրայ, ուղղի ու մաքրի այն խոշոր սխալներից, որ զգալի են նոյն իսկ հայերէն քիչ իմացող հանդիսականների համար և մասաւանդ ոճերի բարբարոսական խառնուրդը...

Սակայն Հայոց բեմը, ինչպէս և ամեն մի բեմ աշխարհի երեսին, չի կարող բեմ համարուել, քանի որ նա կը կերակրուի միմիալն թարգմանտկան ռեպերտուարով։ Թատրոնը այն ժամանակ է միայն թատրոն, երբ հիմնուած է ինքնուրույն գրականութեան հարստութեան վրայ։ Հայերը երբէք չեն կարող թատրոն ունենալ եթէ կարհամարհեն իրանց գրականութիւնը։ Գրականութիւններ

Է միայն թատրոնին հոգի տուղղը, նրա հարազատ մալ-
լը, նրա սննդաբարը։ Մոլորւած են այն մարդիկ, ե-
թէ միայն կան ալդպիսիները, որոնք կարծում են թէ
բեմը կարող է առաջադիմել առանց ինքնուրովն պիես-
ների։ Թարգմանական պիեսներով կերպարուող բեմը մի
ողորմելի պարագիտ է, որի կեանքը որքան ամօթալի է,
նոյնքան և կարճտուել:

Ահա մի շատ նշանաւոր հանգամանք, որի վրայ պարտաւոր են առանձին ուշադրութիւն դարձնել դրամատիքական Ընկերութեան ղեկավարները։ Աալ արդ Ընկերութեան ապագային, եթէ նա թատրոնը կանչատի մեր ինքնուրուն գրականութիւնից և կերևակալի թէ կարող է մի իմաստուն քայլ անել առանց վերջինի աջակցութեան։ Հարկաւ, Ընկերութիւնը դիւթական գաւազան չունի, որի մի շարժումով կարողանար ստեղծել ինքնուրուն պիեսներ։ Բայց նա միջոց ունի և կարող է այդպիսի պիեսների համար հօղ պատրաստել։ Բաւական է, որ նա առանձին իննամքով գործադրի իւր կանոնագրութեան այն կէտը, որ թոյլ է տալիս նրան դրամատիքական երկերի համար պրեմիաներ նշանակելու։ Ալ կէտն ենք մենք համարում կանոնադրութեան ծուծը...

Ալրի Մարիամ Մակարեանը, որ վախճանուեց սեպ-
տեմբերի 24-ին, կտակել է Թիֆլիսի Հայոց Դրամա-
տիքական Ընկերութեանը 3000 ռուբլի այն նպատակով
որ այդ գումարի տոկոսը իւրաքանչիւր տարի լատկա-
ցուի հայերէն լեզուով գրուած լաւագոյն պիեսի հեղի-
նակին: Այս նախատակով կտակ, որքան լիշում ենք, ա-
ռաջին անգամն է լինում հայերի մէջ: Ուշադրութեան
արժանի է այն հանգամանքը, որ խելացի կտակի հե-
ղինակը մի կին է և այն էլ ոչ նոր սերնդից և համե-
մատաքար համեստ կրթութիւն ունեցող կին: Վերջա-
պէս գտնուեց մի կտակարար, որ կարողացաւ հասկանալ,
թէ գրականութիւնն ու թատրոնն էլ հայ ազգի բա-
րուական առաջադիմութեան գործոններ են: Ցանկալի
կը լինէր, որ հանգուցեալ տիկին Մակարեանի կտակը
օրինակելի լինէր մեր հարուստների համար:

Նոր Հանգուցեալը բացի դրանից, և այլ բարեգործական նպատակներով կտակել է 5000 ռուբլի: